

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԿՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 18-Ն
ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԿՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կրաշենի համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը մշակված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում և հանդիսանում է հնգամյա ժամկետում համայնքի համալիր զարգացմանն ուղղված ռազմավարական ուղեցույց փաստաթուղթ:

Հնգամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի վերլուծության, առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ: Այն նախատեսում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և բյուջետավորման նպատակային գործընթացի իրականացումը: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում:

Այն կարող է հաշվի առնվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի զարգացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության և սահմանամերձ բնակավայրերի զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագրերում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ուժեղ և թույլ կողմերը, դասակարգվել են առաջնային և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները, վերլուծվել են համայնքի ֆինանսական, աշխատանքային, նյութատեխնիկական ռեսուրսներն ու տնտեսական հնարավորությունները: Առաջադրվել են ծրագրային աշխատանքներ, որոնցում տրվել են առկա հիմնախնդիրների նկարագրությունները, լուծման ուղիները, պահանջվող ֆինանսական միջոցները, ֆինանսավորման աղբյուրները, ակնկալվող արդյունքները, իրականացվելիք ծրագրերի կենսունակության ապահովման հիմնավորումները, ինչպես նաև կատարման ժամկետներն ու պատասխանատուները: Կատարվել են սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են համայնքի ներկա իրավիճակը բնութագրող վիճակագրական տեղեկություններ:

Ծրագրում ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում կախված արտաքին ու ներքին գործոնների ազդեցությունից կարող են ենթարկվել փոփոխությունների ու լրացումների:

ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Կրաշենի գյուղական համայնքը գտնվում է Շիրակի մարզի հյուսիսային հատվածում, ծովի մակերևույթից 1970 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն է, լանդշաֆտը՝ լեռնատափաստանային, որը բարենպաստ է հողագործության ու անասնապահության համար:

Գյուղի բնակատեղին ունի շատ հին պատմություն. այդ են վկայում գյուղի գերեզմանոցի տարածքում գտնվող հեթանոսական գերեզմանները, ցավոք, գյուղի հիմնադրման մասին մեզ ստույգ տեղեկություններ չեն հասել, սակայն ըստ մեր ուսումնասիրությունների այն հիմնադրվել է միջին դարերում, այդ է վկայում այն փաստը, որ գյուղի աշխարհագրական դիրքը տարածաշրջանում ամենահարմարն է անասնապահության և հողագործության համար, իսկ միջին դարերում առավել զարգացած են եղել գյուղատնտեսության հատկապես այդ ճյուղերը և քաղցրահամ ջրերի առկայությունը, որը չկա տարածքի մյուս համայնքներում: Ըստ մեր ուսումնասիրությունների հավանաբար գյուղը մի քանի անգամ վերաբնակեցվել ու լքվել է՝ առայժմ անհայտ պատճառներով, վերջին անգամ գյուղը վերաբնակեցվել է 1828 թվականին ռուս – պարսկական պատերազմից հետո գյուղում բնակություն են հաստատել Բասենի հայերն իրենց ընտանիքներով և գյուղն անվանել են Ախքիլիսա, անունը օտարածին է և նշանակում է Սպիտակ Վանք: 1948 թվականից գյուղը անվանվել է Կրաշեն, հավանաբար նկատի ունենալով սպիտակ կավից շինությունները:

1920 թվականին գյուղում վերաբնակվել են Մշո գավառի Բուլանդի շրջանի հայերը:

1937 թվականին գյուղում բացվել է 7 - ամյա դպրոց: Համայնքի տարածքում 1860 թվականին կառուցվել է եկեղեցի, որը 1988 թվականի աղետալի երկրաշարժի հետևանքով քանդվել է:

Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել են մոտ 70 - ից ավելի մարդ, որից 36 - ը զոհվել են: Արցախի ազատագրական պայքարին գյուղից մասնակցել են մի շարք ազատամարտիկներ, որոնք բոլորն էլ փառքով ու հաղթանակած վերադարձել են հայրենի օջախները և իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերում գյուղի շենացման գործին:

Համայնքի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից 15կմ է, շրջկենտրոնից՝ 20կմ: Գյուղը սահմանակից է Մեծ Սարիար, Ջաջուռավան և Ջաջուռ գյուղերին, վարչական տարածքը 1370հա է:

Գյուղի հյուսիսային կողմում գտնվող սարի բարձրադիր գագաթին կառուցվել և այժմ էլ պահպանվում է Սուրբ Սարգիս Մատուռը, որտեղ հանրապետության տարբեր վայրերից ուխտի են գալիս մի շարք ուխտավորներ և որի անունով էլ անվանվում է բնության կողմից կառուցված այդ հրաշակերտ ու դժվարամատչելի սարը, սարի լանջին՝ արևելյան ստորոտում, կա բնության կողմից կառուցված քարանձավ, որը շատ անգամ է պաշտպանել գյուղացիներին թուրք խաժամուժի հարձակումներից:

Խորհրդային տարիներին գյուղի տարածքում գործել է կրի հանքը և կրի գործարանը, որը մոտ 500 աշխատատեղ ունեցող հզոր կառույց լինելուց բացի, պատրաստի կիր է մատակարարել Խորհրդային մի շարք երկրների:

1990 թվականից գյուղում գործում է ութամյա դպրոց, գործում է նաև 2007 թվականին հայկական Կարիտաս բարեգործական ընկերության և համայնքապետարանի համատեղ ջանքերով կառուցված սպորտդահլիճ:

Գյուղն հարուստ է սարերից եկող քաղցրահամ ջրերով, ունի ոռոգման համար նախատեսված ջրամբար: Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է: Վերջին տարիներին նկատվում է անսնագլխաքանակի դինամիկ աճ:

Երբեմնի մշակութային հարուստ կյանքով ապրող գյուղը 1988 թ. երկրաշարժի պատճառով կորցրեց մշակույթի ու սոցիալ-տնտեսական նշանակության օբյեկտները, փլվեցին ու վթարային դարձան մի քանի տասնյակ բնակարաններ:

Սակայն երկրաշաժը չկարողացավ ընկճել աշխատասեր ու կամքով օժտված կրաշենցուն ու նա արդեն 28 տարի է նվիրումով վերականգնում է իր ծննդավայրը: Գյուղը կամաց-կամաց կառուցապատվում ու բարեկարգվում է:

Մեր ամենաթանկ կապիտալը մարդն է, ով պետք է սիրի երկիրն ու գյուղը, հանուն մեր պետության ու ժողովրդի բարորության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵԼԸ (մարդ)

(Տվյալները լրացված են 2016 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ)

- Ընդամենը՝ մշտական բնակչություն - 314,
Այդ թվում՝ տղամարդ - 148, կին՝ - 166,
- Տնային տնտեսությունների թվաքանակը – 74,
- Առկա բնակչություն – 292,
- Առկա տնային տնտեսությունների քանակը – 71,

Բնակչության բաշխվածությունն ըստ ազգային պատկանելության (առկա բնակչություն)

- Հայ – 284,
- Եզդի – 30.

Բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի (առկա բնակչություն)

Նախադպրոցական տարիքի երեխաներ / 0 – 6 տարեկան / - 14,

որից՝ մինչև 1 տարեկան – 2,

1-2 տարեկան – 3,

3-4 տարեկան – 2,

5-6 տարեկան – 7:

- Դպրոցական տարիքի երեխաներ / 7 – 17տարեկան / - 14,
որից՝ 7-10 տարեկան – 4,
11-14 տարեկան – 3,

15-17 տարեկան – 7:

- Հասուն տարիքի բնակչություն / 18-64 / - 245,
որից՝ 18-22 տարեկան – 20,
23-45 տարեկան – 156,
46-64 տարեկան – 69:
- Տարեց բնակչություն / 65 և ավելի / - 43:
- Համայնքի ընտրողների թիվը - 254:

Ծնունդ, մահ, ամուսնություն, ամուսնալուծություն (վերջին 3 տարիների միջին ցուցանիշ)

- Ծնունդ - 2,
Որից կենդանի ծնունդ – 2,
- Մահ – 4,
- Ամուսնություն –16,
- Ամուսնալուծություն – 0:

Համայնքի սոցիալական խմբերի ներկայացվածությունը

- Հաշմանդամներ – 6,
այդ թվում կանայք՝ 2,
որից՝ հաշմանդամ երեխա – 0,
- Միակողմանի ծնողազուրկ երեխա - 1,
- Ամուսնալուծված անձի երեխա – 0,
- Կենսաթոշակառուներ – 43,
- Միայնակ չաշխատող կենսաթոշակառուներ – 0,
- Տարեց կենսաթոշակառուներ /75 տարեկան և բարձր/ - 7,

Համայնքի տնային տնտեսությունների սոցիալական խմբերի ներկայացվածությունը

- Երեք և ավելի երեխաներ ունեցող /0-16 տարեկան/ – 1,
- Միայն կենսաթոշակառուներից կազմված /65 և ավելի տարեկան/ - 0,
- Հաշմանդամ երեխա ունեցող – 0,
- Մինչև 6 տարեկան երեխա ունեցող – ,
- Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը՝ 11:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության բաշխումն ըստ գրադվածության հիմնական ճյուղերի (մարդ)

- Գյուղատնտեսական ինքնագրադվածություն – 268,
- Վարձու աշխատանք գյուղատնտեսական ոլորտում – 6,
- Վարձու աշխատանք ոչ գյուղատնտեսական ոլորտում, մասնավոր – 4,
- Վարձու աշխատանք պետական ոլորտում – 9,
- Ոչ գյուղատնտեսական ինքնագրադվածություն – 0,
- Աշակերտներ /16 տարեկան և բարձր/ - 7,
- Ուսանողներ – 9,
- Բանակում ծառայողներ – 7,
որից պայմանագրային՝ 1,
պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող՝ 6,

Համայնքում գրադվածների բաշխվածությունն ըստ ոլորտների

- Գյուղատնտեսություն – 268,
- Էլեկտրոններգիայի, գազի ջրամատակարարման ոլորտի սպասարկում – 2,
- Առևտուր և այլ սպասարկումներ – 2,
- Գյուղատնտեսական ծառայություններ – 6,
- Տեղական ինքնակառավարում – 3,
- Կրթություն – 6,
- Առողջապահություն և սոցիալական ծառայություններ – 1,
- Ոսանողներ, ավարտական դասարանների աշակերտներ, բանակում ծառայողներ – 15:

Միգրացիա /2016 թվականի ընթացքում/

- Արտագնա աշխատանքի մեկնողների թիվ – 28 (21 տնային տնտեսություններից):

Համայնքի հասուն տարիքի բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի

- Տարրական – 8,
- հիմնական – 26,
- միջնակարգ - 180,
- միջնակարգ մասնագիտական – 70,

- բարձրագույն - 30:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և հանայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի /ավագանու 5 անդամ/ և համայնքի ղեկավար: 2016 թ. հոկտեմբերի 9-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով համայնքի ղեկավար է վերընտրվել Արտուշ Միմոնյանը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավարի աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

Համայնքային ծառայության պաշտոններ՝

1. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար – 1 միավոր,
2. գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ – միավոր,

Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ

1. Համակարգչային օպերատոր – 1 միավոր,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

N	Անուն, ազանուն	Ծննդյան թիվը	Կրթությունը	Կուսակցական պատկանելությունը
1.	Քալոյան Միեր Ռոստամի	1993	Միջին մասնագիտ.	անկուսակցական
2.	Միմոնյան Միեր Վարդանի	1992	միջնակարգ	անկուսակցական
3.	Մահտեսյան Էլմիրա Խաչիկի	1967	բարձրագույն	անկուսակցական
4.	Միմոնյան Գայանե Հովհաննեսի	1969	միջնակարգ	անկուսակցական
5.	Կոսեմյան Լիպարիտ Ազատի	1968	Միջին մասնագիտ.	անկուսակցական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ Կրաշենի ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՄՓԵՐԸ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքաչափը (դրամ)
Համայնքային ծառայության պաշտոններ						
1	Աշխատակազմի քարտուղար	1	89947	75.55	1	89947
2	Առաջատար մասնագետ	1	85979	72,22	1	85979
Տեխնիկական սպասարկման անձնակազմ						
3	Համակարգչային օպերատոր	1	80737	67,81	1	80737
	Ընդամենը	3	256663		3	256663

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն համայնքում կազմավորվել և գործում են հետևյալ մշտական հանձնաժողովները՝

- Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողով,

ՀԱՄԱՅՄՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի <<Համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին>> թիվ 51 որոշմամբ:

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի:

Բնակավայրի խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1991 թվականին: Այն ունի 4.5 կմ երկարություն: Ցանցի քայքայվածության պատճառով հաճախակի են ջրագծերի վթարները, ջրի կորուստներն ու աղտոտումները: Սակայն 2016 թվականին Հայկական Կարիտաս բարեգործական ընկերության և համայնքային ներդրման շնորհիվ հիմնովին վերանորոգվել է թե ջրագծի խողովակաշարը և ջրամբարը:

Համայնքը չունի ոռոգման համակարգը, ոռոգումն իրականացվում է ինքնահոս եղանակով, ինչը առաջացնում է ջրի մեծ կորուստներ և ժամանակին չեն կարող իրականացվել ոռոգումը:

Բնակավայրի կոյուղու համակարգն ունի 3.5 կմ ընդհանու երկարություն, որը նույնպես գտնվում է քայքայված վիճակում և ունի վերանորոգման կարիք:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են նաև ինչպես մայրուղի բնակավայր 3,0 կմ, ճանապարհը, այնպես էլ շուրջ 4 կմ ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհները: Դաշտամիջյան ճանապարհների ընդհանու երկարությունը կազմում է 16 կմ, որի առանձին տեղամասերի քայքայվածության պատճառով այն գյուղատնտեսական տեխնիկայի համար դարձել է անանցանելի և լուրջ դժվարություններ է ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ: Համայնքի ուժերով և ներգրավված միջոցներով պարբերաբար կատարվել են բնակավայր մտնող և ներհամայնքային ճանապարհների փոսալցման աշխատանքներ, սակայն այն բավարար համարել չի կարելի:

Բուժ. կետը գործում է վազոն տնակում:

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ

N	Գույքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի արժեքը /հազար դրամ/	Հաշվեկշռային ընդհանուր արժեքը /հազար դրամ/	Գույքի տեխնիկական վիճակի նկարագրությունը
1.	Սպորտդահլիճ	հատ	1	5571.7	5571.7	տանիքը ենթակա է հիմնանորոգման
2.	Նախկին Մանկապարտեզի շենք	հատ	1	6351.6	6351.1	ենթակա է հիմնանորոգման
3.	Ջեռուցման համակարգի	Գծ. մ	544.0	0.12	0.12	ենթակա է դուրս

	խողողակաշար					գրման
4.	Բետոնե ջրավազան /18 մ ³ /	հատ	1	360.0	360.0	ենթակա է հիմնանորոգման
5.	Կոյուղագիծ ազբեստից	Գծ. մ	720.0	160.0	160.0	ենթակա է վերանորոգման
6.	Բետոնյա կամուրջ	հատ	2	1256.0	1256.0	գտնվում է լավ վիճակում
7.	Ասֆալտապատ փողոց	զծ.մ.	984.0	19.5	19.5	ենթակա է նորոգման/0.4 կմ/
8.	Ոչ ասֆալտապատ փողոց	զծ.մ.	1538.0	16.0	16.0	ենթակա է նորոգման
9.	Խմելու ջրի խողողակաշար	զծ.մ.	4920	0.12	0.12	Գտնվում է լավ վիճակում
10.	Գերեզմանատուն թիվ1	հատ	1			գործող
11.	Գերեզմանատուն թիվ2	հատ	1			գործող
12.	Թիվ 2 գերեզմանատան մետաղյա ցանկապատ	զծ.մ.	720	15.0	90.0	գտնվում է լավ վիճակում
13.	Ամառանոցի կացարան	մ ²	40	60.0	60.0	գտնվում է ավերված վիճակում
14.	Ամառանոցի փարախի ցանկապատ	զծ.մ.	180.0	0.11	0.11	բավարար
15.	Սպորտ խաղերի հրապարակ	մ ²	160.0	110.0	110.0	ենթակա է ցանկապատման
16.	Բենզինի բաք	Տոն.	5	120.0	120.0	գտնվում է լավ վիճակում
17.	Գրասեղան	հատ	1	0.25	0.25	բավարար
18.	Երկաթյա պահարան	հատ	1	25.0	25.0	բավարար
19.	Մետաղյա վագոն տնակ	հատ	1	30.0	30.0	ենթակա է դուրսգրման
20.	Գրքեր	հատ	2400	0.3	0.3	1840 հատը ենթակա է դուրս գրման
21.	Համակարգիչ	հատ	1	238.6	238.6	գտնվում է լավ վիճակում
22.	Մոնիտոր	հատ	1	15.7	15.7	բավարար
23.	Մկնիկ	հատ	1	5.5	5.5	գտնվում է լավ վիճակում
24.	Տպիչ	հատ	1	48.0	48.0	անսարք
25.	Ստեղնաշար	հատ	1	8.5	8.5	գտնվում է լավ վիճակում
26.	Սկաներ	հատ	1	28.0	28.0	բավարար
27.	Անխափան սնուցող սարք	հատ	1	38.8	38.8	գտնվում է լավ վիճակում
	ԸՆԴԱՄԵՆԸ					

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնակավայրը կոյուղացված է: Կեղտաջրերի հեռացման համակարգն ունի 4կմ ընդհանուր երկարության, որը կառուցումից ի վեր վերանորոգման չի ենթարկվել: Ցանցի քայքայված է և ունի հիմնանորոգման կարիք:

Բնակավայրում կանոնակարգված աղբահանություն չի իրականացվում: Կենցաղային աղբը համայնքից հեռացվում է տնային տնտեսությունների և գյուղապետարանի կողմից կազմակերպվող սանիտարական մաքրման օրերի միջոցով:

Բնակավայրը չունի համայնքային նշանակության հանգստի գոտի: Հատկապես ամռան ժամանակաշրջանում բարձր է օդի փոշոտվածությունը:

Բնակավայրում վտանգավոր արտանետումներ չկան:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքում կա 74 բնակելի տներ՝ 5846 քառ.մ ընդհանուր մակերեսով: Բնակելի տները մեծ մասը կառուցվել են 1988 թվականի երկրաշարժից հետո: Բոլոր բնակելի տները սեփականաշնորհված են և հանդիսասանում են համայնքի բնակիչների սեփականությունը, իսկ: Բնակավայրը գտնվում է 1988թ. Սպիտակի աղետալի երկրաշարժի գոտում: Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն համայնքի 5 երիտասարդ ընտանիքներ:

ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՍԵՆՑԱԿՆԵՐԻ ԹՎԻ

N	Սենյակների թիվը	Կառուցման տարեթիվը	Բնակարանների թիվը	Բնակարանների ընդհանուր մակերեսը /քառ.մ/	Սեյսմոկայունությունը
	Ընդամենը բնակարաններ	--	--	-	-
1.	1 սենյականոց բնակարան	-	-	-	-
2.	2 սենյականոց բնակարան	-	-	-	-

3.	3 սենյականոց բնակարան	1990-1991թթ.	70	5530	9
4.	4 սենյականոց բնակարան	1989-1995թթ.	4	316	9

ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Բնակավայրի խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1991 թվականի: Այն ունի 5.3 կմ երկարություն: Ցանցի քայքայվածության պատճառով հաճախակի են ջրագծերի վթարները, ջրի կորուստներն ու աղտոտումները:

Համայնքը չունի ոռոգման համակարգը, ոռոգումն իրականացվում է ինքնահոս եղանակով, ինչը առաջացնում է ջրի մեծ կորուստներ և ժամանակին չեն կարող իրականացվել ոռոգումը:

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

Անբարեկարգ և քայքայված վիճակում են ինչպես մայրուղի բնակավայր 3,2 կմ, այնպես էլ շուրջ 6 կմ ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհները: Դաշտամիջյան ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 20 կմ: Նրա առանձին տեղամասերի քայքայվածության պատճառով այն գյուղատնտեսական տեխնիկայի համար դարձել են անանցանելի և լուրջ դժվարություններ են ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ: Համայնքի ուժերով և ներգրավված միջոցներով պարբերաբար կատարվել են բնակավայր մտնող 3,2 կմ և ներհամայնքային ճանապարհների առանձին հատվածների փոսալցման աշխատանքներ, սակայն այն բավարար համարել չի կարելի:

Համայնքում առկա է բնակիչների սեփականությունը հանդիսացող 24 մարդատար ավտոմեքենա:

Բնակավայրը ապահովված է <<ՎԻՎԱՍԵԼ ՄՏՄ>>, <<ՕՐԱՆԺ>>, <<ԲԻԼԱՅՆ>> բջջային հեռախոսակապով:

Բնակավայրն ընդունում է 4 հանրապետական և 3 մարզային հեռուստաալիքներ: Ինտերնետային կապը բավարար է:

Բնակավայր - մարզկենտրոն տրանսպորտային կապն ապահովվում է ավտոբուսի 1 երթուղու միջոցով: Մեկ ուղևորի փոխադրավարձը կազմում է 200 դրամ:

Մայրաքաղաքի հետ կապն ապահովվում է Գյումրի-Երևան երթուղային միկրոավտոբուսների միջոցով: Ջաջուռի երկաթուղային կայարանը համայնքից գտնվում է կմ հեռավորության վրա:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է:

Բնակչությունը սերտ կապեր ունի մայրաքաղաքի, մարզկենտրոնի, նախկին շրջկենտրոնի և շրջակա բոլոր համայնքների հետ:

Համայնքն անդամակցում է <<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանական անձանց միությանը::

Հոգևոր ոլորտում համայնքը համագործակցում է Շիրակի Առաջնորդարանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1354,8 հա, որից`

1. գյուղատնտեսակն նշանակության հողեր – 835,4 հա,

այդ թվում`

- վարելահողեր – 207,13 հա,

այդ թվում`

սեփականաշնորհված – 159,8 հա,

համայնքային սեփականության – 47,33 հա,

- արոտներ – 561,4 հա.

- այլ հողատեսքեր – 519,4 հա:

Վարելահողերի մեկ հեկտարից ստացվող զուտ եկամտի կադաստրային միջին գնահատականը կազմում է 20300 դրամ, իսկ արոտների` 3500 դրամ:

Սեփականաշնորհված վարելահողերի մեկ հողբաժնի չափը կազմում է 1,6 հա.

2. Բնակավայրի հողեր – 32,67 հա.

3. Արդյունաբերական, արտադրական նշանակության հողեր 19,71 հա.

4. Հանքավայրերի հողեր – 10,9 հա

5. Ճանապարհների տակ օգտագործվող հողեր – 10,1 հա.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը հացահատիկային կուլտուրաների մշակությունն ու անասնապահությունն են: Ոռոգման ջրի, բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների /երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն և այլն/ և հակակարկտային կայանքների բացակայության պատճառով համայնքի գյուղացիական տնտեսությունները լուրջ դժվարությունների առաջ են կանգնած գյուղատնտեսական մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու և բարձր բերքատվություն ապահովելու համար:

Համայնքում կազմավորված են 74 գուղացիական տնտեսություններ, որոնց կողմից մշակվում է 207,13 հա վարելահող և օգտագործվում 504,0 հա արոտ: Համայնքի տնտեսությունների սեփականությունն է հանդիսանում 47,33 հա վարելահող, իսկ թվով 11 տնտեսությունների կողմից օրենքով սահմանված կարգով վաճակալված է 32,0 հա վարելահող: Համայնքում վարելահող չունեցող տնտեսություններ չկան:

Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կերային մշակաբույսերի, մասամբ կարտոֆիլի, կաղամբի և բանջարաբոստանային այլ կուլտուրաների մշակությամբ: Գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետությունը ուղղակիորեն կախված է բնակլիմայական պայմաններից: Ցանկատարածությունները մշտապես վտանգված են երաշտով, ցրտահարությամբ և կարկտահարությամբ: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմանների դեպքում կազմում է 25-30 ցենտներ, իսկ երաշտի, ցրտահարության կամ կարկտահարության դեպքում կորուստը կարող է կազմում է 50-100%: Բուսաբուծության զարգացմանը մեծապես խոչընդոտում է ոռոգման համակարգի բացակայությունը, լավորակ սերմերի բացակայությունը, գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների մաշվածությունն ու պակասը, դիզելային վառելանյութի, պարարտանյութերի և թունաքիմիկատների բարձր գները:

Բուսաբուծության բնագավառում վերջին 10 տարիներին արձանագրվել է հացահատիկի և կարտոֆիլի արտադրության ծավալների նվազում:

Գյուղացիական տնտեսությունների կողմից պահվում է 206 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում կովեր՝ 119 գլուխ, ոչխարներ և այծեր՝ 280 գլուխ, խոզեր 44 գլուխ: Առանձին տնտեսություններ զբաղվում են նաև թռչնաբուծությամբ /հավեր՝ 287 թև/ և մեղվապահությամբ /32 մեղվաընտանիք/:

Անասնապահության բնագավառում վերջին 10 տարիներին համայնքում արձանագրվել է մսի և կաթի արտադրության ծավալների ավելացում:

Գյուղում կա 3 տրակտոր, 1 կոմբայն, 1 խոտհնձիչ, 4 բեռնատար ավտոմեքենա, տասնյակ գյուղատնտեսական գործիքներ ու մեխանիզմներ:

Գյուղատնտեսական մեքենաներն ու մեխանիզմները բարոյապես ու ֆիզիկապես մաշված են, կա գյուղատնտեսական տեխնիկայի և պահեստամասերի մեծ պահանջարկ:

Համայնքում առկա գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ

Գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների անվանումը	Չափի միավոր	Քանակը
Թրթուրավոր տրակտոր	հատ	2
Անվավոր տրակտոր	հատ	3
Հացահատրկային կոմբայն	հատ	1
Խոտհնձիչ կոմբայն	հատ	1
Բեռնատար ավտոմեքենա	հատ	4
Տրակտորային կցասայլ	հատ	2
Գուրթան	հատ	2
Կուլտիվատոր	հատ	1
Շարքացան	հատ	1
Հակավորող մեքենա	հատ	2

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 70 աշակերտ/տեղով հանրակրթական մեկ դպրոց, որտեղ ներկայումս սովորում են 9 աշակերտներ:

Դպրոցը կառուցվել է 1991 թվականին:

Դպրոցն ունի 8 մանկավարժ և 6 սպասարկող անձնակազմ, մանկավարժներից 5-ն ունեն բարձրագույն կրթություն, որից 5-ն էլ կանայք են:

Դպրոցն հիմնականում ապահովված է անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և ուսումնա-մեթոդական նյութերով:

Համայնքը չունի հանգստի գոտի կամ այլ հարմարություններ՝ որտեղ հնարավոր կլինի կազմակերպել համայնքի բնակչության հանգիստն ու ազատ ժամանցը, երեխաների մշակութային ու գեղագիտական դաստիարակությունը:

Համայնքն ունի մարզադաշտ, որը վերանորոգման և կառուցապատման կարիք ունի:

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումն իրականացվում է Ջաջուռի ամբուլատորիայի և Գյումրու առողջության կենտրոնի միջոցով, համայնքում աշխատում են 1 բուժքույր:

Համայնքում առկա է համայնքի սեփականություն հանդիսացող նախկին մանկապարտեզի շենքը, որն ունի վերանորոգման կարիք: Ներկայումս շենքը օգտագործվում համայնքի կարիքների համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Բերրի վարելահողերի առկայությունը.
- Կրի պաշարների առկայությունը.
- Երկաթուղուն մոտ գտնվելը.
- Խմելու և ոռոգման ջրերի մեծ պաշարների առկայությունը.
- Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի, բանվորական աշխատուժի առկայությունը.
- գյուղատնտեսական մթերքների վերամշակաման ճյուղերի զարգացման հնարավորությունները:
- Համայնքի բնակչության համախմբվածությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ոռոգման համակարգի բացակայությունը:
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները:
- Հակակարկտային կայանքների բացակայությունը:
- համայնքի բնակֆոնդի քայքայվածությունը:

- Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները:
- Գյուղացիական տնտեսությունների արտադրական փոքր կարողությունները:
- Գյուղատնտեսական տեխնիկայի պակասը, առկա տեխնիկայի մաշվածությունը:
- Հանգստի գոտու բացակայությունը:
- Մայրուղի բնակավայր, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը:
- Գործազրկության բարձր մակարդակը:
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- դաշտավարության և անասնապահության ճյուղերի զարգացում:
- Երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքներով գյուղատնտեսական նպատակային վարկերի տրամադրման և սուբսիդավորման միջոցով գյուղատնտեսական տեխնիկայի նորացում, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացում, վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնում:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄՊԱՌՆԱՅՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը:
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները /երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն, ուժեղ քամիներ/:
- Հակակարկտային կայանքների բացակայությունը:
- Կոյուղաջրերի հեռացման ցանցի քայքայվածությունը.
- Մշակույթի տան և մանկապարտեզի շենքերի քայքայված վիճակը.
- Բնակչության ցածր կենսապայմանները.
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները և համայնքում ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի ռազմավարությունն է՝

Տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

Գյուղատնտեսության ճյուղի և փոքր ու միջին բիզնեսի զարգացման միջոցով ավելացնել նոր աշխատատեղեր և կանխել արտագաղթը համայնքից:

Հիմնական նպատակները

- Ոռոգման համակարգի կառուցում:
- Արոտների ջրարբիացում:
- Խմելու ջրի մատակարարման բարելավում:
- Բնակելի տների տանիքների վերանորոգում:
- Բնակավայր-մայրուղի 3,2կմ ճանապարհի ասֆալտապատում:
- Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում:
- Դաշտամիջյան ճանապարհների փոսալցում:
- Կոյուղու ցանցի վերանորոգում:
- Գյուղացիական տնտեսությունների կարողությունների զարգացում:
- Գյուղատնտեսական տեխնիկայի նորացում:
- Համայնքում գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնում, նոր աշխատատեղերի ստեղծում:
- Կրի գործարանի կառուցում, նոր աշխատատեղերի ստեղծում:
- Անհատական բնակարանային շինարարության խթանում:
- Համայնքի մշակութային կյանքի աշխուժացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում:
- Համայնքում հանգստի գոտու հիմնում:
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցության կազմակերպում:

..ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՐ ԵՎ ԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքում ծառայություններ մատուցելու և ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է հողի հարկից, գույքհարկից և վարձակալության տրված համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարներից: Վերջին 10 տարիներին համայնքի բյուջեի սեփական եկամուտները կատարվել են 70-100 տոկոսով: Բյուջեի մուտքերի հիմնական մասը նպատակաուղղվել են ընթացիկ աշխատավարձերի ու սոցիալական ապահովության պարտադիր վճարների վճարմանը, խմելու ջրի ներքին ցանցի մասնակի վերանորոգմանը, բնակավայր մտնող և միջհամայնքային ճանապարհների փոսային նորոգմանը, փոքրածավալ ծառայությունների մատուցմանը /աղբահանության կազմակերպում և այլն/, սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնությունների տրամադրմանը և այլ ծրագրերի իրականացման համար համայնքից պահանջված ներդրումների կատարմանը, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:

Համայնքի բյուջեի ֆինանսական կարողությունները հնարավորություն չեն տալիս լուծելու համայնքում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները: Այդ հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է պետական մարմինների, հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

01.12.2016թ. դրությամբ համայնքը աշխատավարձի, եկամտային հարկի և պարտադիր նպատակային սոցիալական վճարների գծով ապառքներ չունի:

**ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ,
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ**

Ըստ առանձին բնագավառների ծրագրերի ընտրության և նրանց առաջնահերթության որոշման համար հիմք են հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական ծրագիրը և նամայնքի ղեկավարի նախընտրական քարոզարշավի ժամանակ համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները:

Իսկ ծրագրերի իրականացման, արժեքների գնահատման և հնարավոր ֆինանսավորման աղբյուրների բացահայտման համար հիմք են հանդիսացել տեղական բյուջեի ֆինանսական հնարավորությունները, ՀՀ կառավարության տարածքային զարգացման ռազմավարությունը և հանրապետությունում գործող ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ հաստատած համագործակցության կապերը:

2016- 2021թթ. նախատեսվում է իրականացնել առաջնահերթ լուծում պահանջող հետևյալ ծրագրերը՝,

ԾՐԱԳԻՐ 1

ՀԱՍԱՅՆՔԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ և ՄԱՐԶԱԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Մարզադաշտը կառուցվել է 1992 թ. գյուղի հարավ-արևմտյան հատվածում, իսկ մարզադահլիճը 2007 թվականին մարզադաշտի հարևանությամբ: Ծրագրով նախատեսվում է դաշտի հարթեցում ու սևահողի ծածկույթի ապահովում: Երկրորդ մասով նախատեսվում է ձեռք բերել մարզագույք և մարզադահլիճին կից հանդերցարանի և սան հանգույցի կառուցում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագիրը նպատակաուղղված է բարեկարգ ու կառուցապատված մարզադաշտ ունենալուն և մարզագույք ձեռք բերելուն, որպեսզի կազմակերպել մարզումներ ինչպես դպրոցական, այնպես էլ երիտասարդության համար:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է՝

- Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր,
- Ապահովել համայնքային բյուջեով պահանջվող ներդրումը ծրագրի իրականացման համար,
- Լուծում տալ հետևյալ խնդիրներին.

Խնդիր 1. Հարթեցնել մարզադաշտն ու ապահովել կանաչ ծածկույթով,

Խնդիր 2. Կառուցել բացօթյա մարզումների տեխնիկական միջոցներ,

Խնդիր 3. Կազմակերպել ծառատունկ մարզադաշտի շրջակայքում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ծրագրի իրականացման ֆինանսական միջոցները ըստ հաշվումների (շինանյութ, դիզ. վառելանյութ, տեխնիկայի վարձատրություն, աշխ. գործիքներ, աշխատուժ ըստ ՍԱԴ նորմատիվների), գնահատվում է 1.3 մլն դրամ, որից համայնքը իր միջոցներից կարող է ներդնել 0.3 մլն դրամ, իսկ մնացած 1.0 մմիլիոն դրամի ներդրման համար համար դիմում խնդրանքով դիմել է ՀՀ օլիմպիական կոմիտեին, չաջակցելու դեպքում ծրագրի իրականացման ժամկետը կերկարաձգվի:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի առաջին մասը իրականացվելու է 2017 թ. 3-րդ եռամսյակում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացման գործը կազմակերպելու ու վերահսկելու է համայնքի ղեկավարի աշխատակազմը. պատասխանատու՝ համայնքի ղեկավար Արտուշ Սիմոնյան:

ՄՊԱՍՎՈՂ ԱՂԲՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքը կունենա կանաչապատ ու բարեկարգ մարզադաշտ, գույքով համալրված մարզադահլիճ, որը հնարավորություն կստեղծի ոչ միայն Կրաշեն համայնքի, այլ նաև հարևան համայնքերի բնակչությանը զբաղվելու սպորտով:

ԾՐԱԳԻՐ 2

ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՆԱՊԱՐՅՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ հատվածներում միջհամայնքային ճանապարհները դարձել են գրեթե անանցանելի: Ծրագրով նախատեսվում է բարեկարգել միջհամայնքային 4500 քմ ընդհանուր մակերեսով ճանապարհ, (ճանապարհի խճալցում, ավազալցում, ճանապարհի հարթեցում):

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է նորոգել ու բարեկարգել միջհամայնքային երկու ճանապարհ, որի իրագործման համար անհրաժեշտ է լուծում տալ մի քանի խնդիրների..

Խնդիր1. Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր ըստ առանձին փողոցների.
Խնդիր2. 2017 թ. համայնքային բյուջեով ֆինանսական ներդրումներ նախատեսել ծրագրի իրականացման համար.

Խնդիր 3. Խճալցնել ու ավազալցնել 4500 քմ ճանապարհ ու հարթեցնել:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական չափագրման ու հաշվարկի արդյունքում (շինանյութ, դիզ. վառելանյութ, տեխնիկայի վարձակալություն, աշխատանքյին գործիքներ, պահանջվող աշխատուժ) ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են 0.45 մլն դրամ, որը համայնքը պետք է կատարի իր ուժերով:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրագործել 2017թ. ընթացքում,

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱԽՍԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացման հետ կապված խնդիրների լուծումն ու աշխատանքների կազմակերպումը իրականացնելու է համայնքի ղեկավարի աշխատակազմը:

Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Արտուր Սիմոնյան:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ համայնքը կունենա բարեկարգ միջհամայնքային փողոցներ:

ԾՐԱԳԻՐ 3

ԱՐՈՏԱԿԱՅՐԵՐԻ և ԽՈՏՀԱՐԿՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՅՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Խոտտհարկների մոտ 16 կմ երկարության ճանապարհները անվավոր տեխնիկայի համար դժվար անցանելի է, որի պատճառով համայնքի բնակիչները չեն կարող ժամանակին կատարել խոտհունձը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագիրը նպատակ է հետապնդում նորոգել դաշտամիջյան ճանապարհները, պահովել 4 մ լայնության բանուկ երթևեկելի ճանապարհ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծում տալ հետևյալ խնդիրներին՝
Խնդիր 1. Կազմել նախագծանախահաշվային փաստաթղթեր,
Խնդիր 2. Ապահովել համայնքային բյուջեով պահանջվող ֆինանսական միջոցները ծրագրի իրականացման համար:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են մոտ 0.7 մլն դրամ: Ծրագիրը իրականացվելու է համայնքային բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է ամբողջությամբ իրականացնել 2017 թ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացման կազմակերպումն ու ղեկավարումը՝ Կրաշենի գյուղապետարան:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար Արտուշ Սիմոնյանը

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Ծրագրի իրականացումով դաշտամիջյան ճանապարհները կդառնան անցանելի, ժամանակին և անվտանգ կկատարվի խոտհունձը,
- Հողամասերը կմշակվեն, չեն լինի մշակովի հողամասի կորուստներ:

ԾՐԱԳԻՐ 4

ՈՌՈԳՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես վերը նշվեց գյուղը ունի ոռոգման համար նախատեսված կառուցված ջրամբար, ներկայումս այդ ջրամբարից օգտվում է գյուղի միայն մի մասը, ծրագրով նախատեսվում է 500 գծմ երկարության ոռոգման խողովակաշարի անցկացում

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագիրը նպատակ է հետապնդում

- Ոռոգման ջուրը տնամերձ հողամասեր հասցնել 5-ից 10 րոպեի ընթացքում:
- Նվազագույնի հասցնել ոռոգման ջրի կորուստները:
- Բարելավել տնամերձ հողամասերի ոռոգումը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծում տալ հետևյալ խնդիրներին.

Խնդիր 1. Կազմել աշխատանքների կազմակերպման նախագծա-նախահաշվային փաստաթղթեր.

Խնդիր 2. Ապահովել անհրաժեշտ ֆինանսական ու աշխատանքային ռեզերվները, մինչև 2013 թ. ոռոգման սեզոնի սկսվելը աշխատանքները ավարտելու համար.

Խնդիր 3. Հին և չգործող ոռոգման համակարգի խողովակներից 500 գծմ հանել և օգտագործել ծրագրի իրականացման նպատակով:

Խնդիր 4. Խողովակները մեկուսացնել հակակոռոզիոն շերտով:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԸ

Աշխատանքների ծավալի հաշվարկման արդյունքում ծրագրի իրականացման ֆինանսական միջոցները գնահատվել են 0,9 մլն դրամ, որը կկատարվի բարեգործական կազմակերպությունների ներդրումների միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018 թ. 2-րդ եռամսյակում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Սրտուշ Սիմոնյանը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ կբացառվեն մինչև 50% հասնող ջրի կորուստները, ջուրը հանդամաս կհասնի ավելի արագ, կբարելավվի տնամերձ հողամասերի ժամանակին ոռոգման հարցը:

ԾՐԱԳԻՐ 5

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՅՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրով նախատեսվում է բնակավայրի տարածքում կառուցել 1 խաղահրապարակ, 200 քմ տարածքով:

Խաղահրապարակում տեղադրել խաղասարքեր:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է մանուկների համար ստեղծել խաղատեղեր սպորտի ու ժամանցի համար:

Ծրագրի իրագործումն ունի խնդիրներ`

Խնդիր 1. Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր.

Խնդիր 2. Տարածքը մաքրել, բարեկարգել.

Խնդիր 3. Ցանկապատել տարածքը և կանաչապատել.

Խնդիր 4. Տեղադրել տարբեր խաղասարքեր ու տաղավար:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի իրականացման ֆինանսական միջոցները գնահատվում են 2.0 մլն դրամ Ծրագիրը իրագործվելու է հիմնադրամների կամ բարեգործական կազմակերպությունների ներդրումների միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացրել 2018-2019 թվականների ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱԽՍԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն համայնքի ղեկավար Սրտուշ Սիմոնյանը:

ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքում կստեղծվեն բարեկարգված ու խաղասարքերով ապահոված խաղահրապարակ, որտեղ մանուկները կանցկացնեն իրենց ազատ ժամանակը:

ԾՐԱԳԻՐ 6

ԳՅՈՒՂԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախատեսված է գյուղի կենտրոնական փողոցների գիշերային լուսավորության համար տեղադրել լամպերի 26 կետեր, որոնք կապահովեն գիշերային ժամերի անհրաժեշտ լուսավորությունը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագիրը նպատակ է հետպնդում համայնքում գիշերային ժամերին ունենալ անհրաժեշտ փողոցային լուսավորություն: Ծրագրի կատարման համար լուծում են պահանջում հետևյալ խնդիրները.

Խնդիր 1. Էլեկտրասյուների վրայով անցկացնել առանձին լուսավորության հաղորդակար.

Խնդիր 2. Սոնտաժել լուսավորության լամպերն ու տեղադրել ավտոմատ լուսառեկե-անջատիչ ու ժամային հաշվիչ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի արժողությունը 800 հազ. դրամ է, որը իրականացվելու է համայնքի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի իրականացվելու է 2018-2019 թ.թ. ընթացքում, որից 14 կետ 2018 թ. և 12 կետ 2019 թ. ընթացքում:

ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի կենտրոնն ու փողոցները կդառնան լուսավոր, գիշերային ժամերին հետիոտնի համար հնարավորություն կստեղծվի ազատ տեղաշարժվելու:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Արտուշ Սիմոնյանը:

ԾՐԱԳԻՐ 7

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախատեսվում է հիմնանորոգել համայնքային կենտրոնի շենքը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է շինությունը դարձնել բարեկարգ ու օգտագործելի, ունենալ գրադարան: Մշակույթի տունը ծառայեցնել իր նպատակին, կազմակերպելով ազատ ժամանց ու միջոցառումներ,

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝
Խնդիր 1. Վերանորոգել շենքերի տանիքը:

Խնդիր 2. Կատարել քարե սալիկներով երեսապատում:

Խնդիր 3. Կատարել ներքին հարդարման աշխատանքներ (պաստառապատում, ներկում, հատակի նորոգում, ապակեպատում, դռների նորոգում, ներքին էներգոհամակարգի մոնտաժում):

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ըստ նախնական չափագրման ու հաշվարկի, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են 5.5 մլն դրամ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրագործել տեղական բյուջեի միջոցներով 20% ներդրման և 80% <<Հայկական Կարիտաս>> բարեգործական կազմակերպության ներդրման շնորհիվ, որից էլ կախված է աշխատանքների կատարման ժամկետները:

ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրագործման արդյունքում համայնքում նորմալ կգործի մշակույթի տունը: Մշակույթի տունը վերանորոգումից ու զույթավորումից հետո լիարժեք կծառայի իր նպատակին և միանգամից 40-50 մարդ հնարավորություն կունենան այնտեղ զբաղվել ու անցկացնել իրենց ազատ ժամանակը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Արտուշ Սիմոնյանը:

ԾՐԱԳԻՐ 8

**ԹԻՎ 1 ԳԵՐԵՉՄԱՆՈՑԻ ՑԱՆԿԱՊԱՏԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
և ԹԻՎ 2 ԳԵՐԵՉՄԱՆՈՑԻ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ**

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ

Ծրագիրը նախատեսում է գյուղի գործող թիվ 1 գերեզմանոցի ցանկապատի մետաղական ցանցի վերանորոգում և ներկում և թիվ 2 գերեզմանոցի ցանկապատում, որի ընդհանուր երկարությունը՝ 480 գծմ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ունենալ պաշտպանված ու խնամված գերեզմանոցներ: Ծրագրի խնդիրներն են.

Խնդիր 1. Գործող թիվ 1 գերեզմանոցի ցանկապատի մետաղական ցանցի վերանորոգում և ներկում, տարածքի մաքրում:

Խնդիր 2. Գործող թիվ 2 գերեզմանոցի համար կառուցել մետաղական կոնստրուկցիայի 480 գծմ երկարության ցանկապատ.

Խնդիր 3. Տարածքում առանձին հատվածներում կառուցել մեքենաների կայանատեղի.

Խնդիր 4. Գերեզմանոցներում տեղադրել հանգստաքարեր:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական հաշվարկներով ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են 1,8 մլն դրամ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքային բյուջեի միջոցներով, մի մասը 2019 թ. երրորդ եռամսյակում, մյուս մասը՝ 2020-2021 թթ. ընթացքում:

ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գերեզմանոցները կդադարեն «արոտատեղի» լինենուց, կբացառվեն անհարգի վնասները:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Ա. Սիմոնյանը:

ԾՐԱԳԻՐ 9

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՔՐՈՒՄ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ, ԱՂԲԱՅԱՆՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրով նախատեսվում է ամենօրյա ուշադրություն համայնքի շրջակայքի, հասարակական կենտրոնի ու ներհամայնքային փողոցների մաքրությամբ, հատկապես գարնան ամիսներին կազմակերպել կենտրոնացված աղբահանություն:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ծրագիրը նպատակ է հետապնդում համայնքում ունենալ
- Սանիտարական ապահով վիճակ,
 - Մաքուր փողոցներ,
 - Չաղտոտված շրջակա միջավայր,

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել`
Խնդիր 1. Հատկապես գարնան ամիսներին կազմակերպել կենտրոնացված աղբահանություն (մնացած ժամանակ ըստ անհրաժեշտության): Տեխնիկայի վարձակալումն ու դիզ. վառելանյութով ապահովումը գյուղապետարանի միջոցներով, իսկ բարձումը` բնակիչների ուժերով:

Խնդիր 2. Կոյուղաջրերի համար օգնել բնակիչներին ունենալու ավտոնոմ սեպտիկ հորեր:

Խնդիր 3. Աղբը տեղափոխել միայն հատուկ դրա համար հատկացված տարածք:

Խնդիր 4. Կազմակերպել լրացուցիչ շահագրգռիչ միջոցառումներ բնակավայրի մաքրությունը ապահովելու նպատակով:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում են տարեկան 0,5 մլն դրամ համայնքային բյուջեի միջոցներից:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է կատարել ամեն տարի:

ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի կատարմամբ կբարելավվի բնակավայրի ու շրջակա միջավայրի սանիտարական վիճակը, կբացառվեն տնտեսական աղբի կուտակումները բնակավայրի տարածքում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Ա. Սիմոնյանը:

ԾՐԱԳԻՐ 10

ԾԱՌԱՏՆԿՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրով նախատեսվում է տարեկան 300 դեկորատիվ ու նրգատու ծառերի տնկում կանաչ գոտիներում, դպրոցամերձ տարածքում, ճամփեզրերին ու դաշտապաշտպան գոտիներում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ավելացնել կանաչ գոտիների տարածքը, հիմնել նոր դաշտապաշտպան անտառագոտիներ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծելի դարձնել հետևյալ խնդիրները.
Խնդիր 1. Համայնքի միջոցներով տարեկան ձեռք բերել 300 տնկի,
Խնդիր 2. Նախատեսել ծառատունկի գոտիները,
Խնդիր 3. Օգտագործել համայնքի աշխատուժը հասարակական աշխատանքի կարգով, նպատակ ունենալով մարդկանց մոտ բարձրացնելու պատասխանատվությունը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում է 0.2 մլն դրամ ամեն տարվա համարյուրաքանչյուր տարվա համար համայնքային բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը իրագործվելու է 2017-2018-2019-2020 թ.թ. վաղ գարնանը կամ ուշ աշնանը:

ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ կավելանան կանաչ գոտիների տարածքները, կստեղծվեն դաշտապաշտպան գոտիներ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Ա. Սիմոնյանը:

ԾՐԱԳԻՐ 11

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Գազաֆիկացումը համայնքի համար դիտվում է որպես թիվ 1 հիմնախնդիր, որովհետև դրանով է պայմանավորված գյուղի տնտեսական ու սոցիալական զարգացման հիմնահարցը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

- Ծրագրի հիմնական նպատակներն են.
- Ապահովել կրթական ու հասարակական օբյեկտներին ու բնակչությանը բնական գազով,
 - Աշխուժացնել գյուղի տնտեսությունն ու մարդուն դարձնել սոցիալապես ավելի ապահով,
 - Գյուղացուն պահել գյուղում:
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծելի դարձնել հետևյալ խնդիրները.
Խնդիր 1. Ծրագիրը իրականացման համար դիմել ՀՀ կառավարությանը՝ պետ բյուջեյի կամ բարեգործական կազմակերպություններին ներդրումներ կատարելու կապակցությամբ:
Խնդիր 2. Ապահովել համայնքի կողմից 10 % ներդրում աշխատանքների իրականացման համար,
 - Ծրագրի իրականացման տնտեսական հիմնավորումներով դիմել ՀՀ Շիրակի մարզպետարան:

ԾՐԱԳՐԻՑ ՍՏԱՅՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, կփոխվի գյուղի դեմքը, կաշխուժանա տնտեսությունը, գյուղացին կդառնա ավելի վճարունակ, կկապվի գյուղին, կկրճատվի արտագնա աշխատանքի մեկնողների թիվը, դպրոցն ու հասարակական օբյեկտները կջեռուցվեն ամբողջությամբ, դպրոցում կբարձրանա հաճախելիությունն ու առաջադիմությունը:

Գյուղում կգործարկվեն վերամշակող ձեռնարկություններ, կմատուցվեն կենցաղային ծառայություններ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի իրականացման ժամկետը կախված է ՀՀ կառավարության աջակցությունից:

ԾՐԱԳԻՐ 12

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԵԾ ՍԱՐԻԱՐ, ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԿԻՑ
ՏԱՐԱԾՔԻ
ՄԱՔՐՈՒՄ / ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂՔԻՑ/ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրով նախատեսվում է մաքրել, հարթեցնել ու հնարավորության չափով նախնական տեսքի բերել շրջակա տարածքը (մոտ 4 հա), որոնք լցվել են շինարարական աղբով 1988 թ. երկրաշարժից հետո:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագիրը նպատակ է հետապնդում մաքրել արոտավայրերը շինաղբից, տարածքը բերելով հնարավոր նախնական բնական տեսքի:

Աշխատանքների կատարման համար մրցույթի արդյունքում կնքել աշխատանքային պայմանագիր համապատասխան ծավալի ու պահանջի ձևակերպմամբ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում է 0,9 մլն դրամ, նախատեսվում է կատարել համայնքային բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրագործել երկու փուլով, առաջին փուլը պետք է կատարվի 2018 թ. առաջին եռամսյակում, երկրորդ փուլը՝ 2019 թ. II-III եռամսյակների ընթացքում:

ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ մոտ 4 հա հանդամաս կմաքրվի շինաղբից, արոտավայրը կօգտագործվի նպատակային:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Արտուշ Սիմոնյանը:

Ե Ջ Ր Ա Փ Ա Կ ՈՒ Մ

Կրաշեն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի, բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը:

2016-2021 թ.թ. համայնքային բյուջեները պետք է մշակել որպես զարգացման ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր:

Համայնքի զարգացման կոնկրետ ծրագրեր կարելի է ներկայացնել ՀՀ կառավարություն, Շիրակի մարզպետարան, լրացուցիչ ներդրումներ հայթհայթելու նպատակով: Նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների ներդրումները:

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը կազմվել է համայնքի ռազմավարության առաջնահերթ ծրագրերի ընդգրկման ու ֆինանսական միջոցների ապահովման հնարավոր համադրմամբ ու իրագործելիության բարձր հավակնությամբ: